



# ՎԵՐԱԿԱՆԳՆՄԱՆ ՃԱՆԱԴԱՐՅԱՔԱՐՏԵՉ

Անվտանգ վերաբացման փուլային  
մոտեցում

**Barbara Ferrer, PhD, MEd**



COUNTY OF LOS ANGELES  
**Public Health**



COUNTY OF LOS ANGELES  
**Public Health**

# ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

- I. Վերականգնման երաշխիքներ
- II. Վերականգնման գործընթաց
- III. Վերաբացման փուլեր
- IV. Վերաբացման արձանագրություններ
- V. Վերականգնման չափումներ



# ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ԵՐԱՇԽԻՔՆԵՐԻ ԱՊԱՅՈՎՈՒՄ ՄԻՆՉ ԲԱՑԵԼԸ



## Առողջապահության համակարգի կարողությունների ապահովում.

- Բավարար բուժաշխատողներ, թեստավորում, օդափոխիչներ և ԱՊՄ-եր՝ ծավալի մեծանալու հետ մեկտեղ:



## Խոցելի բնակչության պաշտպանություն.

- Համապատասխան ԱՊՄ-եր և աշխատողներ՝ հաստատության պայմաններում արդյունավետ խնամք ապահովելու և դրական դեպքերը կառավարելու համար
- Հաստատության պայմաններում COVID-19-ի համապատասխան թեստավորում բնակիչների և աշխատողների համար:



## Հանրային առողջապահության թեստավորելու, հայտնաբերելու և մեկուսացնելու կարողությունների ապահովում.

- Թեստավորման բավարար կարողություններ՝ առաջնային խմբերում գտնվող անձանց և ընդհանուր կեցության և առողջապահական հաստատություններում ապրողների համար:
- COVID-19 դրական թեստերով անհատներին հայտնաբերելու և մեկուսացնելու և նրանց հետ սերտ շփված անձանց կարանտինում պահելու կարողություններ:
- Էլեկտրոնային եղանակով տվյալներ հավաքելու բժիշկներից և լաբորատորիաներից, ներառյալ՝ ռասայական/էթնիկական տվյալները:




## Աշխատողներին և բնակիչներին անվտանգ պահելու համար արձանագրությունների մշակում.

- Արձանագրություններ են ստեղծվում ձեռնարկությունների և հաստատությունների անվտանգ վերաբացումն ապահովելու համար, ներառյալ՝ ուշադրությունը ֆիզիկական հեռավորության և վարակի վերահսկման միջոցառումների վրա:




# ՓՈՒԼԱՅԻՆ ՎԵՐԱԲԱՑՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑ




# ՀԻՆԳ ՓՈՒԼԻՑ ԲԱՂԿԱՑԱԾ ՎԵՐԱԲԱՑՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑ՝ ՀԻՄՆՎԱԾ ՌԻՍԿԻ ՎՐԱ

## ՓՈՒԼ 1 (ԱՅԺՄ)

Տանն անվտանգ է հրաման  
Վերականգնման  
այլանավորում



## ՓՈՒԼ 2 (ՇՈՒՆՈՎ)




- Մայիսի 8. Ֆլորիստներ, որոշ մանրածախ խանութներ, ավտոմեքենաների վաճառակետերը, գուլֆի դասընթացներն ու արահետերը:
- Շուտով. այլ ցածր ռիսկային բիզնեսներ (արտադրություններ, գրասենյակներ, մանրածախ առևտու)
- Կարևոր առողջապահական ոլորտներ
- Բացօթյա հանգիստ և գրադարաններ
- Թանգարաններ, մշակութային կենտրոններ, պատկերասրահներ

## ՓՈՒԼ 3 (ԱՆՈՐՈՉ)



- Բարձր ռիսկային բիզնեսներ (մարմանակարչություն, մասաժ, բարեր/գիշերային ակումբներ)
- Կինոթատրոններ և բուլինգի սրահներ
- K-12 դպրոցներ
- Զոլեջներ և համալսարաններ

## ՓՈՒԼ 4 (ԱՆՈՐՈՉ)



- Ամենաբարձր ռիսկային բիզնեսներ (զվարճանքի վայրեր)
- Խոշոր համաժողովներ
- Մարզական և հանդիսատեսներով միջոցառումներ

## ՓՈՒԼ 5 (ԱՆՈՐՈՉ)

Լիովին նորմալ  
գործունեություն



# ՄԱՅԻՍԻ 8, ՎԵՐԱԲԱՑՈՒՄ

Մայիսի 8-ին սահմանափակ թվով բիզնեսներ կկարողանան բացվել՝ ապահովելով համապատասխան պաշտպանության միջոցներ

## **Ֆլորիստներ, Խաղալիքների խանութներ, գրախանութներ, հագուստի խանութներ, երաժշտական խանութներ և սպորտային ապրանքների խանութներ**

- Մայթեզրի մոտից վերցնել միայն
- Պետք է հետևեն ֆիզիկական հեռավորության և վարակի վերահսկման արձանագրություններին

## **Մեքենաների վաճառքի ցուցասրաներ**

- Պետք է հետևեն ֆիզիկական հեռավորության և վարակի վերահսկման արձանագրություններին

## **Գուլֆի դասընթացներ**

- Պրոֆեսիոնալ խանութները փակ
- Բառ-սեղաններն Concession stands եւ ռեստորանները՝ միայն դուրս տանելու համար
- Պետք է հետևեն ֆիզիկական հեռավորության և վարակի վերահսկման արձանագրություններին

## **Արահետներ**

- Պետք է պահպանեն ֆիզիկական հեռավորությունը
- Պետք է կիրառեն դեմքի կտորե ծածկող միջոց



# ԱՆՎՏԱՆԳ ՎԵՐԱԲԱՑՄԱՆ ՊԼԱՆԱՎՈՐՈՒՄ

Յուրաքանչյուր ոլորտ կունենա անվտանգ վերաբացման արձանագրություններ, որոնք վերաբերվում են հետևյալ մտահոգիչ կետերին.

## Աշխատողների առողջության և անվտանգության պաշտպանություն և աջակցություն

- Սահմանափակեք անհատական աշխատանքը և ապահովեք, որ խոցելի աշխատողներն ունենան այլընտրանքային առաջադրանքներ
- Ապահովեք և պահանջեք դեմքի ծածկող միջոցների և անձնական պաշտպանիչ միջոցների կիրառումը:
- Մշակեք քաղաքականություններ, որոնք աշխատողներին հնարավորություն են տալիս տանը մնալ, երբ հիվանդ են

## Համապատասխան ֆիզիկական հեռավորության ապահովում

- Սահմանափակեք տարածքի զբաղվածությունը՝ Անվտանգ վերաբացման արձանագրություններին համապատասխան:
- Հնարավորինս ապահովեք անհատների միջև 6 ոտնաչափ հեռավորությունը
- Դասավորեք աշխատակիցների ժամանակացույցերը՝ ֆիզիկական հեռավորությունը հնարավոր դարձնելու համար

## Վարակի վերահսկման պատշաճ հսկողություն

- Հետևեք մաքրման և ախտահանման խիստ չափանիշներին:
- Հաճախակի մաքրեք հաճախակի հպման մակերեսները

## Հասարակության հետ հաղորակցում

- Պարզորոշ նշաններ փակցրեք՝ այցելուներին արձանագրությունները հաղորդելու համար

## Ծառայությունների արդար հասանելիության ապահովում խոցելի բնակչության համար

- Առաջնայնություն տվեք կարևոր ծառայությունների հասանելիությունը
- Հնարավորինս դարձրեք գործարքները և ծառայությունները առցանց:



# ԱՐԴՅՈ՞Ք ԴԱՆԴԱՂԵՑՆՈՒՄ ԵՆՔ ՏԱՐԱԾՈՒՄԸ

## Որքանո՞վ ենք ի վիճակի դանդաղեցնել տարածումը:


- Արդյո՞ք մենք ունենք բավարար հիվանդանոցային կարողություններ, ներառյալ՝ օդափոխիչները և ինտենսիվ թերապիայի մախճակալների քանակը
- Արդյո՞ք ԱՊՄ-երի քանակը բավարար է առողջապահության բոլոր աշխատողների համար:
- Արդյո՞ք մենք ունենք բավարար թեստավորման կարողություններ և պարագաներ:
- Արդյո՞ք մենք ունենք դեպքերի և շփումների հայտնաբերման բավարար կարողություններ:

## Որքանո՞վ ենք արդյունավետ տարածումը դանդաղեցնելու գործում:

- Արդյո՞ք մահացության գործակիցները՝ ըստ տարիքի, աղքատության կարգավիճակի և ռասայի/էթնիկ պատկանելության համեմատաբար կայուն են
- Արդյո՞ք հոսպիտալացման գործակիցները՝ ըստ տարիքի, աղքատության կարգավիճակի և ռասայի/էթնիկ պատկանելության համեմատաբար կայուն են
- Բարձր ռիսկիային բնակչությանն համար բավարար մատչելի է թեստավորումը:







# ՀՆՈՐՅԱԿԱԼՈՒԹՅՈՒՆ

